## Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր  N ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/62-1-Հ1
## 12.09.2023Թ.ԿՆՔՎԱԾ ԹԻՎ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/62-1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «24» «11» 2023թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Համիկ Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կարո Աղյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2023թ սեպտեմբերի 12-ին կնքված N **ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/62-1** գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 3-րդ ենթակետը՝ Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, որոշեցին Պայմանագրի 1-ին, 2-րդ, 5-րդ, 20-րդ և 21-րդ չափաբաժինների համար հաստատել նոր՝ փոփոխված տեխնիկական բնութագիրը համաձայն Հավելված 1-ի:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 02.11.2023թ թիվ 1906-Ն որոշումը հաստատել Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման դիմաց վճարման ժամանակացույցը համաձայն Հավելված 2-ի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**2.1** Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

**2.2** Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

**2.3** Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**2.4** Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 և թիվ 2 հավելվածները համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3<br>Կառավարական տուն 2,<br>ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011038461<br>ՀՎՀՀ 02698732 | «ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ<br>Հասցեն՝ ք. Երևան, Աջափնյակ 16 թաղ.,18, բն. 41<br>Հեռ.՝ (+374) 93-803-036<br>«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 16048260010500<br>ՀՎՀՀ 01260623 |
| **Գլխավոր քարտուղար՝**<br>_________________ **Հ. Հակոբյան**<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | **Տնօրեն՝**<br>_________________ **Կ. Աղյան**<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

*Հավելված թիվ 1*

*« 24 » « 11 » 2023թ. կնքված*

*N ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/62-1-Հ1 համաձայնագրի*

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

| Ծառայության | | | |
|---|---|---|---|
| րավերով նախատես-ված չափա-բաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգ-ման (CPV) | անվանումը | Տեխնիկական բնութագիրը |
| 1 | **39111140/510** | աթոռներ-1 | Աթոռ աշակերտական՝ 1-4 դասարանների համար՝ Աշակերտական աթոռ՝ մետաղական հիմքով, բարձրությունը մեխանիկական եղանակով կարգավորվող: Նստելատեղը և մեջքի հենակը պետք է պատրաստված լինեն նրբատախտակից՝ 10մմ հաստությամբ, գույները և չափերը՝ Առողջապահության նախարարության 28.03.2017թ. 12-Ն հրամանի և ԳՈՍՏ 11015-93 համապատասխան: Աթոռի նստելատեղի չափերը՝ 290x330մմ, նստելատեղի մակերևույթը պետք է ունենա (D=170մմ) փոսիկ, փոսիկի խորությունը 10-12մմ: Նստելատեղի նրբատախտակը աթոռի մետաղական կմախքի վերևի շրջանակի հետևի և կողային երկու կողմերից պետք է դուրս գա համապատասխանաբար 25մմ, իսկ դիմացի եզրից՝ 50մմ, որը պետք է դեպի ներքև կորացնել 90°-ով, ( R=20-50 մմ): Նրբատախտակի եզրերը պետք է լինեն ողորկ, մշակված: Աթոռի մեջքի հենակի չափերը՝ 290x120մմ, հենակը ողջ երկարությամբ պետք է դեպի ներս աղեղաձև կորացնել (R=600մմ): Նրբատախտակը կմախքին միացվում է միջանցիկ հեղյուսե մանեկային ամրացումով: Նրբատախտակի կողմից հեղյուսը պետք է լինի ողորկ, իսկ եզրերը՝ նրբատախտակի հարթության վրա: Աթոռի կմախքը պետք է լինի մետաղական քառանկյուն խողովակներից (25x25x2.0մմ), անկյունների միացումը զոդման եղանակով 45 աստիճան հատվածքով, կմախքի արտաքին չափերը՝ 240x255 մմ, որին զոդման միջոցով ամրացվում են մետաղական ոտքերը: Աթոռի 2 զույգ մետաղական ոտքերից յուրաքանչյուրը իրենից ներկայացնում է կարգավորվող բարձրությամբ երկու տրամաչափի քառանկյուն խողովակից՝ արտաքին և ներքին (միջուկ), բաղկացած կոնստրուկցիա: Արտաքին խողովակի չափերը՝ 25x25x2.0մմ (ներքևի խողովակ), բարձրությունը՝ 195մմ: Ներքին խողովակի՝ միջուկի չափերն են՝ 20x20x2.0մմ (վերևի խողովակ), բարձրությունը՝ 195մմ: Աթոռի ոտքերի արտաքին խողովակները զոդման եղանակով ուղղահայաց միացվում են գետնին հորիզոնական դիրքով դրված մետաղական քառակուսի խողովակից պատրաստված 280 մմ երկարությամբ հենակին, չափերը՝ 25x25x2.0մմ: Հենակին միացվող 2 ոտքերի միջև հեռավորությունը՝ 100մմ: Հենակի եզրը պետք է խցանված լինեն պլաստիկե բաց գույնի խցաններով՝ 5-6 մմ հաստությամբ: Աթոռի ոտքերը պետք է ունենան **40մմ** քայլով բարձության կարգավորման 3-4 հնարավորություն, որոնք յուրաքանչյուր կողմից ֆիքսվում են 2 հատ հեղյուսե մանեկային կապով: Աթոռի նստելատեղի բարձրությունը հատակից մինչև նստելատեղի երեսը՝ 260-380մմ, իսկ հատակից մինչև մեջքի հենակի վերևի եզրի բարձրությունը 500-620մմ: Աթոռի նստելատեղի և մեջքի հենակի կազմած անկյունը պետք է լինի 95-130°, իսկ հանգույցը՝ կորացվի R= 60 մմ շառավղով: Զոդման կարանները պետք է լինեն մշակված, ողորկ: Կմախքը ամբողջությամբ լինի փոշեներկված բարձրակարգ նարնջագույն ներկանյութով:**Նմուշը կցվում է:** Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Երաշխիքային ժամկետը՝ 365 օր:Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով:<br>Ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը՝ ±5%, գույները համաձայնեցնել պատվիրատուի և դպրոցի տնօրինության հետ: |

| | | | |
|---|---|---|---|
| 2 | 39121100/505 | գրասեղաններ | Ուսուցչի սեղան՝ Ուսուցչի սեղան, չափսերը՝ 1200x600x760մմ: Սեղանի աշխատանքային հարթության, կողապատերի (ոտքերի), հետնապատի և գզրոցի համար պետք է օգտագործվի լամինացված ФSU 18մմ հաստությամբ: Աշխատանքային հարթության եզրերը պետք է շրջափակվեն 1-2մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), ոչ աշխատանքային հարթության եզրերը պետք է շրջափակվեն 0.4մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC): Սեղանի առջևը փակվում է 18մմ հաստությամբ ФSU-ով (դիմապատը)՝ որի չափսերն են՝ 1164x450x600մմ, որը տեղադրվում է սեղանի աշխատանքային հարթության տակից, եզրին հավասար և ամրանումում է աշխատանքային հարթության եզրին (տակից) և կողապատերի (ոտքերի) ներսի մասին: Կողապատերի (ոտքերի) լայնությունը՝ 570մմ: Կողապատերի (ոտքերի) եզրերը կշրջափակվեն 0.4-1մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), իսկ հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին պետք է ամրացվի ոտիկներ՝ 5-6մմ բարձրությամբ: Սեղանի աշխատանքային հարթության վերևի աջ և ձախ եզրային անկյուններում համակարգչային տեխնիկայի լարերի համար պետք է տեղակայվի միջանցիկ անցքեր՝ տեղակայված փակվող խցաններով՝ **նուշը կցվում է:** Սեղանը կունենա առանձին, 4 անիվի վրա շարժվող գզրոց, չափսերը՝ 410x460x690մմ, երեք դարակներով համապատասխանաբար չափսերով՝ 130-150; 130-150; 250-350մմ, հնարավոր առավելագույն խորությամբ, միասնական փականով փակվող, դարակները բացվում և փակվում են փափուկ փակվող, անաղմուկ սահնակներով (սալյասկա): Սեղանը, կողապատերը (ոտքերը), դիմապատը, գզրոցը և պլաստիկե եզրաժապավենները պետք է լինեն նույն՝ ФSU-ի, բնափայտի երանգներով ոչ շատ մուգ գույնի: Դարակները պետք է ունենան օվալաձև կամ ուղիղ մետաղական բռնակներ, որոնց երկարությունը պետք է լինի առնվազն 100մմ: Միացումներն իրականացնել երաշխավորված և թաքնված ձգանների միջոցով: Կմախքը ամբողջությամբ լինի փոշեներկված բարձրակարգ սև գույնի ներկանյութով: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Երաշխիքային ժամկետը՝ 365 օր:Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով:<br>Ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը՝ ±5%, գույները համաձայնեցնել պատվիրատուի և դպրոցի տնօրինության հետ: |
| 5 | 39132220/503 | կախիչներ | Հանդերձարանի կախիչներ՝ կախիչ հագուստի համար 7 տեղանոց՝ յուրաքանչյուրը երկուական մետաղական կախիչներով՝ պատից ամրացվող, չափսերը՝ 1500x500x250մմ(ԵxԲxԽ),որից 500մմ–ը դա հետնապատի բարձրությունն է, այն կարող է լինել նաև ոչ ամբողջական ФSU-ից պատրաստված, այլ իրար զուգահեռ, հավասարաչափ հեռավորությամբ ամրացված (10-20)x500մմ(LxԲ), չափսերի դետալներով: 250մմ-ոց ФSU-ն դա ամրացվում է վերևում, ծածկի նման ողջ լայնությամբ և երկարությամբ՝ գլխարկներ և այլ թեթև իրեր վրան դնելու համար: Կախիչը պատրաստված 18 մմ հաստությամբ լամինացված ФSU-ից, եզրերը պետք է շրջափակվեն 0.8-2 մմ հաստության պլաստիկե եզրակալով (PVC), կախիչները ամրացված իրարից 150-250 մմ հեռավորության վրա, գույնը՝ բնափայտի: Միացումներն իրականացնել երաշխավորված և թաքնված ձգանների միջոցով: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Երաշխիքային ժամկետը՝ 365 օր:Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով:<br>Ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը՝ ±5%, գույները համաձայնեցնել պատվիրատուի և դպրոցի տնօրինության հետ: |
| 20 | 39121200/503 | սեղաններ | Մանկական սեղան՝ չորստեղանի /5-6 տարիքային խմբի համար/՝ Գույները և չափերը՝ ՀՀ Առողջապահության նախարարության 20.12.2002թ. N857 հրամանի պահանջներին համապատասխան: Մետաղական կմախքով մանկական սեղանի չափսերն են՝ 1000x700x540մմ (ԵxLxԲ):<br>Սեղանի աշխատանքային հարթության համար պետք է օգտագործվի կրեմագույն, կանաչ, դեղին գույնի լամինացված ФSU՝ 18մմ հաստությամբ, գույների քանակը համաձայնեցնել պատվիրատուի հետ:<br>Լամինացված ФSU-ի աշխատանքային հարթության եզրերը պետք է լինենն հղկված, մշակված և ողորկ, շրջափակվեն 1-2 մմ հաստության պլաստիկ եզրաժապավենով (PVC): Բոլոր անկյունները պետք է կլորացվեն, կամ անկյուններին ամրացվեն պլաստմասե կամ ռետինե կլորացված հատուկ դետալներ: Սեղանի կմախքը պատրաստված է 25x25x2.0մմ չափսի մետաղական քառանկյուն խողովակներից, կմախքի արտաքին չափերը՝ 800x600x518մմ (ԵxLxԲ), որին զոդման միջոցով ամրացվում են 20x20x2.0մմ տրամաչափի քառանկյուն խողովակից 4 մետաղական ոտքերը, որոնք էլ զոդման եղանակով շրջանաձև կապով ներքևի մասում միացվում են իրար հետ 15x15x2.0մմ տրամաչափի քառանկյուն խողովակով: Ոտքերը պետք է խցանված լինեն պլաստիկե խցաններով՝ 4-6մմ հաստությամբ: Ոտքերը պետք է խցանված լինեն պլաստիկե խցաններով՝ 6մմ հաստությամբ: Զոդման կարանները պետք է լինեն մշակված, ողորկ, մետաղը փոշեներկվում է բարձրակարգ ներկանյութով: Կմախքը ամբողջությամբ լինի փոշեներկված բարձրակարգ դեղին գույնի ներկանյութով: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Երաշխիքային ժամկետը՝ 365 օր:Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով:<br>Ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը՝ ±5%, գույները համաձայնեցնել պատվիրատուի և դպրոցի տնօրինության հետ: |

| | | | |
|---|---|---|---|
| 21 | 39111140/512 | աթոռներ-3 | Մանկական աթոռ /5-6 տարիքային խմբի համար/՝ Գույները և չափերը՝ ՀՀ Առողջապահության նախարարության 20.12.2002թ. N857 հրամանին համապատասխան: Մանկական փայտե (հաճարից) աթոռը պետք է լինի հղկված, մշակված և ողորկ, եռաշերտ լաքապատված, էկոլոգիապես մաքուր ու անվնաս, անկյունները կլորացվեն, կամ անկյուններին ամրացվեն պլաստմասե կամ ռետինե կլորացված հատուկ դետալներ: Նստելատեղի չափերը՝ 340x310մմ, նստելատեղի բարձրությունը հատակից 320մմ: Աթոռի հենակի բարձրությունը հատակից 590մմ: Աթոռի հենակը պետք է պատրաստված լինի 10մմ հաստությամբ նրբատախտակից, չափերը՝ 150x310մմ, այն ամրանում է նստելատեղին երեք զուգահեռ հորիզոնական 10մմ տրամագծով 260մմ երկարությամբ կլոր փայտերով, իրարից 50մմ հեռավորությամբ: Աթոռի կոնստրուկցիան հավաքվում է շիպերով և պտուտակներով, նստատեղը ամրացված է պտուտակներով, եզրերը մշակված են, անկյունները կլորացված, կամ անկյուններին ամրացված պլաստմասե կամ ռետինե կլորացված հատուկ դետալներ: Փայտյե աթոռի թիկնակը ներկված լինի դեղին գույնի բարձրորակ ներկանյութով: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Երաշխիքային ժամկետը՝ 365 օր:Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Ապրանքների չափերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը՝ ±5%, գույները համաձայնեցնել պատվիրատուի և դպրոցի տնօրինության հետ: |

**ԳՆՈՐԴ**

________________ Հ. Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

________________ Կ. Աղյան

(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված թիվ 2*

*« 24 » « 11 » 2023թ. կնքված*

*N ՀՀԿԳՄՍՆԷԱԾԱՊՁԲ-23/62-1-Հ1 համաձայնագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Հրավերով նախա-տեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Ապրանքի | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ՝ , ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 39111140/510 | աթոռներ-1 | | | | | | | | | | | | 225000 | 225000 |
| 2 | 39121100/505 | գրասեղաններ | | | | | | | | | | | | 240000 | 240000 |
| 5 | 39132220/503 | կախիչներ | | | | | | | | | | | | 250800 | 250800 |
| 13 | 39292110/508 | գրատախտակներ-2 | | | | | | | | | | | | 840000 | 840000 |
| 20 | 39121200/503 | սեղաններ | | | | | | | | | | | | 558000 | 558000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 21 | 39111140/512 | Աթոռներ-3 | | | | | | | | | | | | 936000 | 936000 |

ճարման ենթակա գումարները ներկայացվում են անողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

______________ Հ. Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

______________ Կ. Աղյան

(ստորագրություն)

Կ.Տ.